



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«29» փետրվարի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-13/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 12.02.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 12.02.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Հեռախոսային կապի ծառայություններ» ձեռքբերման նպատակով «ՍՊ-ՀՀԾՁԲ-15/25/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին: Ընթացակարգի գնման առարկան է հանդիսացել Պատվիրատուի կարիքների համար «Հեռախոսային կապի ծառայություններ» ձեռքբերումը, որոնք խմբավորված են եղել երկու չափաբաժնում՝

Առաջին չափաբաժին. Հանրային հեռախոսային ծառայություններ

Երկրորդ չափաբաժին. Բջջային հեռախոսային ծառայություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.02.2016թ. ընթացակարգի հայտերի բացման նիստում մերժել է Ընկերության առաջին չափաբաժնով ներկայացված հայտը և առաջին չափաբաժնի հաղթող է ճանաչել ընթացակարգի մյուս մասնակցին՝ «Յուքոմ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը գտնում է, որ Հանձնաժողովի կայացրած որոշումներն անհիմն են և չեն բխում օրենքի պահանջներից:

Ընկերությունը նշել է, որ 22.01.2016թ.-ին Պատվիրատուից ստացել է Ընթացակարգին մասնակցելու հրավերը: 03.02.2016թ. Ընկերությունը հրավերով սահմանված կարգով և ժամկետով ներկայացրել է հայտն էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով:

Ընկերությունն ընթացակարգին է մասնակցել երկու չափաբաժնով:

Ընկերությունից բացի Ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով մասնակցել է նաև «Յուքոմ» ՍՊԸ-ն:

Առաջին չափաբաժնի մասով մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնի առաջարկներ.

«ԱրմենՏել» ՓԲԸ՝ ամսական 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ

«Յուքոմ» ՍՊԸ-ը՝ 720 000 (յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ 12 ամսվա համար:

Ընկերությունը հայտնել է, որ իրենց գնի առաջարկում առաջին չափաբաժնի համար սահմանված ծառայությունների համար առաջարկված ընդհանուր գինը, որոնք գրված են տառերով և թվերով, համապատասխանել են իրար: Դրա հետ մեկտեղ, Ընկերության գնի առաջարկի 3-րդ սյունյակում տեղ է գտել թվերով գրված թվաբանական վրիպակ:

Հանձնաժողովն ուսումնասիրել է Ընկերության գնի առաջարկը, հայտնաբերել է նշված անհամապատասխանությունը, սակայն առանց հետագա ուսումնասիրման և պարզաբանման, որոշում է ընդունել մերժել Ընկերության առաջարկը՝ *գնային առաջարկում սխալի պատճառով*:

Ընկերության գնի առաջարկում՝ 3-րդ սյունյակում («ինքնարժեք») տեղ է գտել թվերով գրված թվաբանական վրիպակ՝ «36» թվի փոխարեն պետք է կարդալ «26»: Հաշվի առնելով, որ գնի առաջարկի աղյուսակի 6-րդ սյունյակը աղյուսակի 3-րդ, 4-րդ և 5-րդ

սյունյակներում թվերով գրված թվերի ընդհանուր գումարն է՝ Հանձնաժողովը հայտնաբերել է թվաբանական սխալի՝ վրիպակի փաստը:

Ընկերությունը գտնում է, որ նմանատիպ սխալի հայտնաբերումը հիմք չէ մասնակցի հայտը մերժելու համար, քանի որ ՀՀ օրենսդրության և ոչ մի դրույթ չի սահմանում մասնակցի հայտում թվաբանական սխալի առկայությունը որպես հայտի մերժման հիմք: Ընդհակառակը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված են այդպիսի սխալների կամ անհամապատասխանությունների ուղղման և շտկման հնարավորությունները, հայտում տառերով և թվերով գրված գումարների միջև անհամապատասխանությունների դեպքում հայտի գնահատման համար ընդհանուր կանոնը և գնահատող հանձնաժողովի լիազորությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում **տառերով գրված գումարը**:

ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման 44-րդ կետի երրորդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով **տառերով գրվածը**:

Հանձնաժողովը, հայտնաբերելով անհամապատասխանությունը, այնուամենայնիվ որպես հիմք, չի ընդունել մեկ թվով արտահայտված տառերով գրված գումարը:

Հանձնաժողովը, հայտնաբերելով թվաբանական սխալը, նաև չի կիրառել որոշման նույն կետով սահմանված Հանձնաժողովի լիազորությունը և չի կատարել սխալների ուղղումը: Ավելին, Հանձնաժողովն, առհասարակ, չի անդրադարձել և հաշվի չի առել Որոշման 45-րդ կետով սահմանված դրույթը, որի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով **կասեցնում է նիստը**, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ըստ Ընկերության՝ Հանձնաժողովն, արձանագրելով անհամապատասխանությունը, հաշվի չի առել որոշման 45-րդ կետով նախատեսված դրույթը, այսինքն չի կասեցրել նիստը և Ընկերությանը չի ընձեռել հնարավորություն շտկելու այդ անհամապատասխանությունը: Փոխարենը, Հանձնաժողովն իր որոշման մեջ հանգել է եզրակացության, որ գնի առաջարկում տեղ գտած թվաքանական սխալը բավարար հիմք է Ընկերության հայտը մերժելու համար:

Ըստ Ընկերության՝ Հանձնաժողովը չի կատարել Օրենքի 31-րդ հոդվածի և Որոշման 44-րդ կետի 3-րդ ենթակետի և 45-րդ կետի պահանջները՝ չի առաջնորդվել վերը նշված դրույթներով և չի իրականացրել Օրենքով և Որոշմամբ սահմանված գործողությունները, ինչի արդյունքում հանգել է սխալ եզրակացության և կայացրել սխալ որոշում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 45-րդ հոդվածի պահանջով՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն խնդրել է.

1. Դադարեցնել Հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ կայացված առաջին չափաբաժնով ներկայացված «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին և առաջին չափաբաժնի մասով «Յուքոմ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումները,

2. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՍՊ-ՇՀՇՁԲ-15/25/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի առաջին չափաբաժնով գնում կատարելու ընթացակարգը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 17.02.2016թ. ժամը 17:20-ին ԳԲԽ-13/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ներկայացուցիչը պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը և հայտնել, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա է եղել անհամապատասխանություն, որպիսի պայմաններում Հանձնաժողովը պետք է կամ շտկեր նշված անհամապատասխանությունը, կամ պետք է կասեցներ նիստը և Ընկերությանն ընձեռեր հնարավորություն շտկելու այդ անհամապատասխանությունը:

2. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.02.2016թ. թիվ 5/08/5087-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/2» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը մերժել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» № 168-Ն որոշման № 1 հավելվածի 44-րդ կետի 4-րդ ենթակետը, այն է՝ «հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկները», և 45-րդ կետը, այն է՝ «Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:

Հայտում ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի գումարները պետք է կազմեն ընդհանուր գումարը: «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում ընդհանուր գումարը նշված է 60 000 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի գումարները միասին փաստացի կազմում են ավելին՝ 70 000 ՀՀ դրամ:

Ըստ Պատվիրատուի՝ եթե նույնիսկ ընդունենք, որ հայտում տեղ գտած անհամապատասխանությունը թվաբանական սխալ է, ապա ուղղումը պետք է կատարի մրցույթի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Որոշման № 1 հավելվածի 44-րդ կետի 3-րդ ենթակետը, այն է՝ «թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով, եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ (հիմք ընդունելով տառերով գրվածը)՝ փոխելով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գինը»: Այս

դեպքում, ըստ նշվածի, պետք է պահպանվեր մասնակցի կողմից ներկայացված 36000 ՀՀ դրամ ինքնարժեքը, և կարող էր փոխվել միայն ընդհանուր գումարը, այսինքն՝ 60000 ՀՀ դրամը դարձվեր 70000 ՀՀ դրամ ($36000 + 24000 + 10000 = 70000$ ՀՀ դրամ), որի տարեկան արժեքը կազմում է 840000 ՀՀ դրամ (12×70000) և որն էլ զգալիորեն բարձր է մյուս մասնակցի ներկայացրած գնային առաջարկից (720000 ՀՀ դրամ):

Պատվիրատուն նշել է, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքում հղումներ են կատարված Որոշման 44-րդ և 45-րդ կետերին, սակայն Որոշումը նման թվագրումներով կետեր չի պարունակում, իսկ եթե նկատի են ունեցել որոշման № 1 հավելվածի նույն թվագրումներով կետերը, ապա դրանք հիմք չեն հանդիսանում մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումները բողոքարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ «ՍՊ-ՇՀԾԶԲ-15/25/2» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովն առաջնորդվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ Պատվիրատուն գտնում է, որ «Արմենտել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է, իսկ գնահատող հանձնաժողովի որոշումներն իրավագոր են:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 17.02.2016թ. ժամը 17:20-ին ԳԲԽ-13/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչները պարզաբանել են, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա չի եղել անհամապատասխանություն, այլ եղել է սխալ ներկայացված գնային առաջարկում, ինչի հիմքով էլ գնահատող հանձնաժողովը առաջին չափաբաժնով մերժել է Ընկերության հայտը:

Պատվիրատուի ներկայացուցիչները պարզաբանել են նաև, որ Ընկերության ներկայացրած գնային առաջարկում անհամապատասխանություն լինելու պարագայում էլ, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» № 168-Ն որոշման 45-րդ կետի համաձայն, գնահատող հանձնաժողովը տվյալ չափաբաժնով պետք է մերժեր Ընկերության հայտը:

3. ԳԲԽ-13/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-13/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար՝ հեռախոսային կապի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱրմենՏել» ՓԲԸ-ն:

2. «ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 4.1.1 կետի համաձայն՝ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

3. «ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի հավելված 4-ի համաձայն՝ գնային առաջարկը ներկայացվում է հետևյալ ձևով.

Չափա- բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5

4. Ընկերությունն Ընթացակարգի հրավերի N 4 հավելվածով՝ գնային առաջարկով հայտնել է, որ ուսումնասիրելով հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

Չափա- բաժին ների համար ները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	«Հանրային հեռախոսային ծառայություններ» N 1 Գնային առաջարկը ներկայացված է 24 հեռախոսահամարի համար ամսավճարի՝ բաժանորդային վարձի, մասով, 1 (մեկ) ամսվա կտրվածքով: Մատուցվելիք ծառայություններ գանկը ներառյալ բաղադրիչների հաշվարկը ներկայացվում է տեխնիկական բնութագրին կից ցանկով:	36 000	24 000	10 000	60 000 (վաթսուն հազար)

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 03.02.2016թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի առաջին չափաբաժնով մերժել «ԱրմենՏել» ՓԲԸ-ին՝ գնային առաջարկում սխալի պատճառով և առաջին չափաբաժնի հաղթող ճանաչել «Յուքոմ» ՍՊԸ-ին:

4. ԳԲԽ-13/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 12.02.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը, «ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), ՀՀ ֆինանսների նախարարության 28.03.2013թ. թիվ 1.1/13.1/4089-13 շրջաբերականը, հայտնում է հետևյալը.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արտարժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացված կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի նույն կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Կարգի 44-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը: Ընդ որում, թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով, եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ (հիմք ընդունելով տառերով գրվածը)՝ փոխելով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գինը:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ **գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան**, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 28.03.2013թ. թիվ 1.1/13.1/4089-13 շրջաբերականի՝ հայտի գնային առաջարկը գնահատելիս՝ հիմք է ընդունվում տառերով նշված գումարը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնային առաջարկը գնահատելիս՝ հիմք է ընդունվում տառերով նշված գումարը, ապա այն դեպքում, երբ, օրինակ, **ներկայացված հայտում ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի հաշվարկի թվաբանական գումարը չի համապատասխանում տառերով գրված գումարին**, ապա մասնակցի հայտի

համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին գնահատելիս՝ **հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:**

Տվյալ դեպքում, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում 1-ին չափաբաժնով մեկ միավորի համար ինքնարժեքի (36000 ՀՀ դրամ), շահույթի (24000 ՀՀ դրամ) և ԱԱՀ-ի (10000 ՀՀ դրամ) հաշվարկի թվաբանական գումարը (36000+24000+10000) չի համապատասխանում մեկ միավորի համար առաջարկվող գնի թե թվերով, և թե տառերով գրված՝ **60000, վաթսուն հազար ՀՀ դրամ գումարին**, մինչդեռ Ընթացակարգի հրավերի N 4 հավելվածով՝ գնային առաջարկով, պահանջվել է, որպեսզի մեկ միավորի համար առաջարկվող գինը (տառերով և թվերով) հավասար լինի մեկ միավորի ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի թվաբանական գումարին:

Ուստի, գտնում ենք, որ տվյալ դեպքում Պատվիրատուն, մերժելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով, պահպանել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 45-րդ կետի պահանջներով, պարտավոր էր կասեցնել նիստը և առաջարկել շտկել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի գնային առաջարկում տեղի ունեցած անհամապատասխանությունը, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ վերոհիշյալ շտկումն արգելվում է այն դեպքում, երբ **գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան**, ինչը տվյալ դեպքում առկա է:

Կարգի 44-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի գնային առաջարկում, տառերով նշված գինը հիմք ընդունելով, թվաբանական սխալների ուղղում կատարելու Ընկերության պահանջի կապակցությամբ հայտնում ենք, որ Կարգի վերոհիշյալ կետը վերաբերում է այն դեպքերին, երբ հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ ապրանքի, ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ինչը տվյալ դեպքում առկա չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասով, Կարգի 44-րդ և 45-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի Ընկերության բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Այսպիսով, գտնում ենք, որ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կարիքների համար հեռախոսային կապի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՊ-ՇՀԾՁԲ-15/25/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2016թ. թիվ 3 արձանագրության 3-րդ կետով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու և առաջին չափաբաժնով «Յուքոմ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու պահանջների վերաբերյալ Ընկերության կողմից Կենտրոնին 12.02.2016թ. ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-13/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Դավթյան